ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 17-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-2019/16-14-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2019/16-14-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 16-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 17-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկեր, խնդրում եմ հստակեցնել ԳՀԱՊՁԲ-2019/16-14-ԵՊԲՀ ծածկագրով մրցույթի 85 չափաբաժնի հետևյալ չափորոշիչները՝ վզիկի չափսերը ոչ պակաս, քան՝ 1.0 x 0.5 x 0.8 x 0.1 x 0.3 x 0.3, և 86 չափաբաժնի հետևյալ չափորոշիչները՝ վզիկի չափսերը ոչ պակաս, քան՝ 1.0 x 0.5 x 0.8 x 0.1 x 0.3 x 0.3: Նշված թվային չափսերը խնդրում ենք ցույց տալ "վզիկի" պատկերի վրա, կամ նշել նշված մեծություններից յուրաքանչյուրի անվանումը և չափման միավորը:

Պարզաբանում N 1: Չափսերը սահմանված են միլիմետրերով և բոլոր սահմանված չափսերի համար ընդունելի է 10% դրական կամ բացասական շեղումը:
Վզիկի վերին հատվածը՝ 0.5մմ
Վզիկի ստորին հատվածը՝ 1.0մմ
Վվիկի կողմնային երկար հատվածը՝ 0.8մմ
Վվիկի կողմնային կարճ հատվածը՝ 0.1մմ
Վզիկի միջային հատվածի վերին հատվածը՝ 0.3մմ
Վզիկի միջային հատվածի ստորին հատվածը՝ 0.3մմ

Հարցադրում N 2: Հարգելի հանձնաժողով, խնդրում ենք տալ պարզաբանում 36-րդ չափաբաժնի մասով քանի որ Ձեր կողմից նշված չէ թե ինչ տեսակի ամրակ է պահանջվում՝ տիտանային թե պոլիմերային: Ինչպես նաև խնդրում եմ տալ պարզաբանում քանակի վերաբերյալ քանի որ Ձեր կոմղմից նշված 18 հատը Դուք ի նկատի ունեք 18 հատիկ, թե 18 քարթրիջ (մեկ քարթրիջում 6 հատիկ):

Պարզաբանում N 2: Ամրակի տեսակը նշված չէ, քանի որ ընդունելի է և՛ տիտանային, և՛ պոլիմերային տեսակը: Պահանջված 18 հատը նշանակում է 18 x 6 = 108 հատ վիրաբուժական կլիպս /նախահաշվային գինը սահմանվել է հենց այդ հաշվարկով/:

Հարցադրում N 3: Հարգելի հանձնաժողով, խնդրում ենք ներկայացնել պարզաբանում 59 չափաբաժնի տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Ըստ նշված տեխնիկական բնութագրի Ֆիշեր և Փայքել 350 ապրանքանիշով խոնավացուցիչ գոյություն չունի: Առկա է Ֆիշեր և Փայքել 850 տարբերակը: Ենթադրաբար տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ: Խնդրում ենք պարզաբանել:

Պարզաբանում N 3: Խոնավացուցիչի տեսակն է «Ֆիշեր և Փայքել 850»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին:

Հեռախոս՝ 060 651 471

Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԳՀԱՊՁԲ-2019/16-14-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝ _____ Ա.Պետրոսյան

Անդամներ՝ _____ Ա.Հակոբյան

_____ Հ.Սարգսյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Է.Միրոյան